բակների հետ։ 20· Ուրգուբ հաթթական քաղաքը՝ Ուրգուբ, Ուրգուլա, Ուրգանդից աւերակների հետ։ 21· Սերպուլան՝ — Շիրարնէի, Զիրփուլիի հետ։ 22· Սիպպարը՝ — Սպերի, Շուբանի, Շուբլիձէի հետ։ 23· Քութին՝ — Կութի, Կուդրաչէն, Կուդաուր աւերակների հետ։ 24· Քուֆան՝ — Կութա, Կուփա, Կոփի աւերակների հետ· եւն եւն։

Այս պատմական քաղաքների եւ աւանների անունները, որոնք յաճախ կրկնուած են ինչպէս Հայաստանում, Կովկասում, նոյնպէս եւ Ճորոխի Աւազանում, ստիպում են ենթադրելու, որ սրանք ո՛չ միայն իրար հետ կապ են ունեցել, այլ իրարից են փոխ վերցրել քաղաքակրթութիւնը դարէդար· հետեւաբար սերտ յարաբերութիւն են ունեցել, իրարից ընդօրինակել ո՛չ միայն դիք ու դիցուհիք, այլ ամէն մի դիւտ եղել է ընդհանրական եւ իրարից օգտուած։

Եթէ 4000—5000 տարի անեղծ պահպանուած է Խալխալի, Փիսունջուրի, Սպերի, Բագդատի, Անահիտի, Վարդավառների ու Վարդեհէրների անունները· ի՞նչի չհաւատալ, որ այս դեղերի անուններն էլ անաղարտ պահպանել են իրենց դարեւոր աւանների, բերդերի, ոստանների անունները եւ մեզ են հասցրել։ Մանաւանդ Թորդումի, Ոլթիի, Կլարջքի սոյն դեղերի մօտ լեռների մէջ գտնուած եւ փորուած անձաւները ծոի-